ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/159

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Ջրային կոմիտե
Բողոք բերող՝ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններ /կոնսորցիում/

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ, Ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ (SCADA) համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5582-2022 գրությամբ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի 25.03.2022թ.-ի թիվ 03/17/1135-2022 գրության հիման վրա, 01.04.2022թ.-ին «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 01.04.2022թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2022թ.-ի թիվ 148-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2022-2023թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 05.04.2022թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

06.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/159 համարի ծածկագիրը:

13.04.2022թ.-ին և 22.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2022թ.-ին:

2. Ջրային կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն 25.03.2022թ.-ի թիվ 03/17/1135-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ ներկայացնում եմ Ջրային կոմիտեի կողմից կազմակերպված ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման

աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՍԿԱԴԱ (SCADA) համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման շինարարական աշխատանքների «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը հրապարակվել են էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով 2021 թվականի դեկտեմբերի 3-ին և հայտերը բացվել են 2022 թվականի հունվարի 13-ին, ժամը 16:30-ին:

«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի մասնակից ընկերություն՝ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումը հայտ է ներկայացրել ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժիններին: 02.02.2022 թվականի ժամը 11:30-ին ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցները գնի նվազեցման շուրջ կազմակերպված բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին առաջարկել են.

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 71 583 220 ՀՀ դրամ/ Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար – Կոտայք ՋՕԸ -ի սպասարկման տարածք				
1	Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում	44 000 000	8 800 000	52 800 000
2	Արտեզիա ՍՊԸ	46 000 000	9 200 000	55 200 000
Չափաբաժին 2 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 34 678 000 ՀՀ դրամ/ Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար - Սյունիք ՋՕԸ-ի սպասարկման տարածք				
1	Ֆլորա էներջի ՍՊԸ	28 890 000	5 778 000	34 668 000
2	Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում	28 898 333	5 779 667	34 678 000
Չափաբաժին 3 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 805 318 500 ՀՀ դրամ/ Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար - Ջրառ ՓԲԸ-ի սպասարկման տարածք				
1	Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում	562 000 000	112 400 000	674 400 000
2	Արտեզիա ՍՊԸ	563 000 000	112 600 000	675 600 000
Չափաբաժին 4 /նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 45 947 200 ՀՀ դրամ/ Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար - Արարատ ՋՕԸ -ի սպասարկման տարածք				
1	Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում	38 200 000	7 640 000	45 840 000
2	Արտեզիա ՍՊԸ	39 602 994	7 920 598.8	47 523 592.8

Բանակցությունների արդյունքում՝ Ընկերությունները առաջարկված գների վերաբերյալ ստորագրել են 02.02.2022թ. թիվ 5 արձանագրությանը կից փաստաթղթում

(կցվում է): Հիմք ընդունելով բանակցությունների արդյուքները և մասնակից ընկերությունների առաջարկները գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրությամբ N 1, 3, 4 Չափաբաժիններում ընտրված մասնակից է համարել «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին և հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Պայմանագիր կնքելու որոշման մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը այն է 04.02.2022թ., հանձնաժողովի քարտուղարը համակարգի (ARMEPS) միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկել է ծանուցում՝ (կցվում է) պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին (համաձայն հրավերի 9.4 կետի): ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի Հրավերի 9.3 կետի համաձայն (Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:) ընտրված մասնակից «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումի էլեկտրոնային փոստի հասցեին (էլ. փոստ՝ tender-consult1@yandex.ru), որը նաև ARMEPS համակարգում ընկերության գրանցված էլեկտրոնային փոստն է, 21.02.2022թ. ուղարկել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը: Ծանուցումը ստանալուց հետո ընկերության ներկայացուցիչը բազմակի անգամ հանձնաժողովի քարտուղարին հեռախոսակապի միջոցով ուղղել է հարցադրումներ և ստացել պարզաբանումներ պայմանագրի նախագծի, որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովումների վերաբերյալ: 11.02.2022թ. ընկերության ներկայացուցիչը հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է բանկային երաշխիքների նախագծերի տարբերակներ ճշգրտման նպատակով, որին ի պատասխան ստացել պարզաբանումներ:

«Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումը պայմանագրի նախագիծը, պայմանագրի որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովումների հետ միասին ուղեկցող գրությամբ պետք է ներկայացներ մինչև 15.03.2022թ., սակայն «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից նշված փաստաթղթերը չեն ներկայացվել: Համաձայն ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի Հրավերի 9.5 կետի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում հրավերի 9.5 կետով

նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր: Գնահատող հանձնաժողովը N 6 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի Հրավերի 9.5 կետը՝ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին համարել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկված և ընտրված մասնակից ճանաչել՝ հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին («Արտեզիա» ՍՊԸ):

Կից ներկայացնում եմ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումի ներկայացրած հայտերը և գնահատող հանձնաժողովի որոշումները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններ /կոնսորցիում/-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերությունների /կոնսորցիում/ ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.04.2022թ.-ի գրությամբ դիմել է «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5582-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 13.04.2022թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2022/159 ընթացակարգը:

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գնահատող հանձնաժողովը /այսուհետ նաև հանձնաժողով/ հրապարակել է հրավեր և հայտարարություն ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով, ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրման

աշխատանքների նպատակով ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով /այսուհետ նաև հրավեր/:

2. «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ (այսուհետ նաև Ընկերություն) և «Նարսեր Շին» ՍՊԸ (Գործընկեր 2) կոնսորցիումով 13 հուվարի 2022թ. ներկայացրել է հայտ և մասնակցել է Ջրային կոմիտեի կողմից հայտարարված ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով բաց մրցույթին:

3. 02 փետրվարի 2022թ.-ի նիստի արձանագրության մեջ 2-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովը սխալ է գնահատել արդյունքները և Ընկերությունը չի ճանաչվել ընտրված մասնակից:

4. 14.03. 2022 թվականին ներկայացվել է բողոք, որը վարույթ ընդունելուց հետո 18.03.2022 թվականի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 6 արձանագրությաոը «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ին, որը մասնակցում է «Նարսեր Շին» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով, գնահատող հանձաժողովը զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով: Նշվածի հիման վրա նախաձեռնվել է սույն ընթացակարգը:

Գտնում եմ, որ պետք է մերժել նախաձեռնված ընթացակարգը հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն. «1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարվելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ նախ չէր կարող նախաձեռնվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, քանի որ մինչև մինչև տվյալ մրցույթի պայմանագրի կնքված լինելու հայտարարության հրապարակումը. ցանկացած մասնակից իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի որոշումները, այլ կերպ. Բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության պայմաններում մասնակիցների այդ իրավունքը չի կարող որևէ կերպ սահմանափակվել: Սակայն Ջրային կոմիտեն կատարելով ակնհայտորեն գործել է ոչ իրավաչափ, որով համապատասխան պաշտոնատար անձինք թույլ են տվել կոպիտ խախտումներ:

Ավելին, սույն գործով նույն մրցույթի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին թիվ 6 արձանագրությունը բողոքարկման արդյունքում արդեն իսկ դադարեցվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/159 որոշմամբ, հետևաբար խոսք լինել չի կարգով ընթացակարգի բավարարման մասին:

Սույն գործով Ընկերությունը դրսևորել է պատշաճ վարքագիծ. հետևաբար բողոքն անհիմն է և ենթակա մերժման, ուստի խնդրում եմ մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2022/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Ջրային կոմիտեի կողմից ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ (SCADA) համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2021թ.-ին հայտարարվել է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 13.01.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումը, «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ն, «Ֆլորա էներջի» ՍՊԸ-ն և «Արտեզիա» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3), ինչպես նաև հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 21.01.2022թ.-ը ժամը 18:00-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.01.2022թ.-ին ժամը 17:13-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 25.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումները կատարվել են:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 կետը, որոշել է «Արտեզիա», «Արազեն հայ-գերմանական ՀՁ», «Ֆլորա էներջի» ՍՊԸ-ներին, «Շին Մոնտաժ Տրանս» և «Նարսեր Շին» ՍՊԸ-ների կոնսորցիումին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի է ունենալու 27.01.2022թ.-ին ժամը 11:30-ին:

ix. Հանձնաժողովի 27.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ անհրաժեշտություն է առաջացել հրավիրել արտահերթ նիստ՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության համար:

x. Նույն արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքում որոշել է «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ 19.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրությամբ

արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով, այն պատճառաբանությամբ, որ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 21.01.2022թ.-ին ժամը 13:55-ին (անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ՝ 21.01.2022թ.) ներկայացվել է շտկված փաստաթղթերը, որում բացակայել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարարգիրը:

xi. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 կետը, որոշել է «Արտեգիա», «Ֆլորա էներջի» ՍՊԸ-ներին, «Շին Մոնտաժ Տրանս» և «Նարսեր Շին» ՍՊԸ-ների կոնսորցիումին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի է ունենալու 02.02.2022 թվականին ժամը 11:30-ին:

xii. Հանձնաժողովի 02.02.2022թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ բանակցություններին մասնակցում էին «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ն (գոծընկեր 1), «Արտեզիա» ՍՊԸ-ն և «Ֆլորա էներջի» ՍՊԸ-ն:

xiii. Բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից առաջարկված գինը.

	Մասնակցի անվանումը	*Արժեք*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գինը*
	Չափաբաժին 1 */նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 71 583 220 ՀՀ դրամ/* *Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար –* *Կոտայք ՋՕԸ -ի սպասարկման տարածք*			
1	*Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում*	*44 000 000*	*8 800 000*	*52 800 000*
2	*Արտեզիա ՍՊԸ*	*46 000 000*	*9 200 000*	*55 200 000*
	Չափաբաժին 2 */նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 34 678 000 ՀՀ դրամ/* *Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար - Սյունիք ՋՕԸ-ի սպասարկման տարածք*			
1	*Ֆլորա էներջի ՍՊԸ*	*28 890 000*	*5 778 000*	*34 668 000*
2	*Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում*	*28 898 333*	*5 779 667*	*34 678 000*
	Չափաբաժին 3 */նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 805 318 500 ՀՀ դրամ/* *Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար - Ջրառ ՓԲԸ-ի սպասարկման տարածք*			
1	*Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում*	*562 000 000*	*112 400 000*	*674 400 000*
2	*Արտեզիա ՍՊԸ*	*563 000 000*	*112 600 000*	*675 600 000*
	Չափաբաժին 4 */նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 45 947 200 ՀՀ դրամ/* *Շինարարական աշխատանքներ հիդրոտեխնիկական կառույցների համար - Արարատ ՋՕԸ -ի սպասարկման տարածք*			
1	*Շին Մոնտաժ Տրանս ՍՊԸ և Նարսեր Շին ՍՊԸ կոնսորցիում*	*38 200 000*	*7 640 000*	*45 840 000*
2	*Արտեզիա ՍՊԸ*	*39 602 994*	*7 920 598.8*	*47 523 592.8*

xiv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի ուսումնասիրության և բանակցությունների արդյունքում, որոշել է՝

1. ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի՝

- թիվ 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին,

- թիվ 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Ֆլորա էներջի» ՍՊԸ-ին:

2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

xv. www.gnumner.am կայքում 04.02.2022թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 10 օրացուցային օր:

xvi. «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ի կողմից 14.03.2022թ.-ին ժամը 14:18-ին ներկայացվել է բողոք:

xvii. Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.03.2022թ.-ին ժամը 14:28-ին:

xviii. Բողոքներ քննող անձի կողմից 15.03.2022թ.-ին, ժամը 12:21-ին www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակված հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) բողոքը ընդունվել է վարույթ:

xix. Հայտարարությամբ՝ Բողոքներ քննող անձը տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

xx. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղար է հանդիսանում Ա. Սարգսյանը (այսուհետ նաև՝ Քարտուղար), իսկ որպես քարտուղարի էլ. փոստի հասցե նշված է՝ finansakan2013@mail.ru:

xxi. Բողոքներ քննող անձի էլ. փոստի հասցեից՝ Քարտուղարի finansakan2013@mail.ru էլ. փոստի հասցեին 15.03.2022թ.-ին ժամը 11:59-ին ուղարկվել է բողոքը վարույթ ընդունելու մասին հայտարարությունը, բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը: Բացի այդ, Բողոքներ քննող անձը 15.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/4338-2022 գրությամբ դիմել է Ջրային կոմիտեին, հնարավորություն տալով «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ի կողմից 15.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը՝ միաժամանակ այն ուղարկելով Քարտուղարի էլ. փոստի հասցեին:

xxii. Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 18.03.2022թ.-ին ժամը 13:03-ին, 24.03.2022թ.-ին ժամը 17:04-ին, ժամը 17:17-ին և 17:21-ին համապատասխանաբար հրապարակվել է Ջրային կոմիտեի «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին ճշգրտված հայտարարությունը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությունը, ընթացակարգի իրական շահառուների մասին հայտարարությունը և Ջրային կոմիտեի «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին նոր հայտարարությունը:

xxiii. Հանձնաժողովի 18.03.2022թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ բանակցությունների արդյունքում՝ ընկերությունները առաջարկված գների վերաբերյալ ստորագրել են 02.02.2022թ.-ի թիվ 5 արձանագրությանը կից փաստաթղթում: Հիմք ընդունելով բանակցությունների արդյուքները և մասնակից ընկերությունների առաջարկները գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրությամբ 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններում ընտրված մասնակից է համարել «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին և հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Պայմանագիր կնքելու որոշման մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը, այն է՝ 04.02.2022թ., հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկել է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին (համաձայն հրավերի 9.4 կետի): «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի Հրավերի 9.3 կետի համաձայն՝ (Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:) ընտրված մասնակից «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումի էլեկտրոնային փոստի հասցեին (էլ. փոստ՝ tender-consult1@yandex.ru), որը

նաև ARMEPS համակարգում ընկերության գրանցված էլեկտրոնային փոստն է, 21.02.2022թ.-ին ուղարկել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը: Ծանուցումը ստանալուց հետո ընկերության ներկայացուցիչը բազմակի անգամ հանձնաժողովի քարտուղարին հեռախոսակապի միջոցով ուղղել է հարցադրումներ և ստացել պարզաբանումներ պայմանագրի նախագծի, պայմանագրի որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովումների վերաբերյալ: 11.02.2022թ.-ին ընկերության ներկայացուցիչը հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է բանկային երաշխիքների նախագծերի տարբերակներ ճշգրտման նպատակով, որին ի պատասխան ստացել է պարզաբանումներ:

«Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումը պայմանագրի նախագիծը, պայմանագրի որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովումների հետ միասին ուղեկցող գրությամբ պետք է ներկայացներ մինչև 15.03.2022թ.-ը ներառյալ, սակայն «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից նշված փաստաթղթերը չեն ներկայացվել: Համաձայն «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի Հրավերի 9.5 կետի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում հրավերի 9.5 կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

xxiv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձանաժողովը, հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի Հրավերի 9.5 կետը «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին համարել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկված: Համաձայն «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի Հրավերի 8.20 կետի, այն է՝ Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը՝ սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.19-րդ կետերով սահմանված ընթացակարգի կիրառմամբ, ընտրված մասնակից է համարվել «Արտեզիա» ՍՊԸ-ին և կիրառել վերը նշված կետերը:

«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել «Արտեզիա» ՍՊԸ-ին:

Ուժը կորցրած է համարվել 02.02.2022թ. թիվ 5 արձանագրության հիման վրա հրապարակված հայտարարության «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը:

Հրապարակվել է նոր հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժնի մասով:

xxv. Հանձնաժողովի 02.02.2022թ.-ին կայացված բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը չի տրամադրվել:

xxvi. Ընթացակարգի շրջանակներում «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ի կողմից 14.03.2022թ.-ին ներկայացվել է բողոք:

xxvii. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 ծածկագրով կայացրած որոշմամբ որոշել է՝ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ի կողմից 14.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի: Պարտավորեցնել «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով կայացված որոշումները: Ամբողջությամբ դադարեցնել թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումները և ընդունել «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ 1-ին ու 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում ուղարկելու մասին որոշումներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5582-2022 գրությամբ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի,

գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ... բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 9-րդ կետի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները: Նման պարագայում բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Բողոքներ քննող անձը բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.procurement.am (www.gnumner.am) կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացը ինքնաբերաբար կասեցվում է:

Այսինքն՝ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով

սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ի կողմից 14.03.2022թ.-ին ժամը 14:18-ին ներկայացվել է բողոք: Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.03.2022թ.-ին ժամը 14:28-ին: Բողոքներ քննող անձի կողմից 15.03.2022թ.-ին, ժամը 12:21-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) բողոքը ընդունվել է վարույթ: Հայտարարությամբ՝ Բողոքներ քննող անձը տեղեկացրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքներ քննող անձի էլ. փոստի հասցեից՝ Քարտուղարի finansakan2013@mail.ru էլ. փոստի հասցեին 15.03.2022թ.-ին ժամը 11:59-ին ուղարկվել է բողոքը վարույթ ընդունելու մասին հայտարարությունը, բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը: Բացի այդ, Բողոքներ քննող անձը 15.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/4338-2022 գրությամբ դիմել է Ջրային կոմիտեին, հնարավորություն տալով «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ-ի կողմից 15.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը՝ միաժամանակ այն ուղարկելով Քարտուղարի էլ. փոստի հասցեին:

Սակայն Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 18.03.2022թ.-ին ժամը 13:03-ին, 24.03.2022թ.-ին ժամը 17:04-ին, ժամը 17:17-ին և 17:21-ին համապատասխանաբար հրապարակվել են Ջրային կոմիտեի «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին ճշգրտված հայտարարությունը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությունը, ընթացակարգի իրական շահառուների մասին հայտարարությունը և Ջրային կոմիտեի «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին նոր հայտարարությունը:

Բացի այդ, Մասնակիցը ներկայացված բողոքով հայտնել է, որ վերջինս 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել է 34 658 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե 34 678 000 ՀՀ դրամ, այսինքն՝ Հանձնաժողովի կողմից ընտրված ճանաչված «Ֆլորա էներջի» ՍՊԸ-ի կողմից

առաջարկված գնից ավելի ցածր գին, որը հանձնաժողովը հաշվի չի առել: Հանձնաժողովի 02.02.2022թ.-ին կայացված բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը բողոքի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չի տրամադրվել:

Ընթացակարգի շրջանակներում «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ի կողմից 14.03.2022թ.-ին ներկայացված բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 ծածկագրով կայացրած որոշմամբ բավարարվել է մասնակի և պարտավորեցվել է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով կայացված որոշումները: Ամբողջությամբ դադարեցնել թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումները և ընդունել «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ 1-ին ու 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում ուղարկելու մասին որոշումներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավրություն, որն էլ հանգեցնում է

Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերոնշյալ որոշմամբ պարտավորեցվել է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով կայացված և ամբողջությամբ դադարեցնել թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումները, ինչով պայմանավորված վերանում է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերությունների /կոնսորցիում/ հայտն անբավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2022թ.-ի թիվ 26/26-1/5582-2022 գրությամբ Շին Մոնտաժ Տրանս» ՍՊ և «Նարսեր Շին» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/159 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**